Ամբողջ Բագրեւանդ միանգամէն առնելով ձուաձեւ գիրք ունի, երկարութիւնը ուղղուած է ընդ մէջ արեւելից և յարեւելեան հարաւոյ 20—25 ժամ երկարութիւն, որ մի ակընթարթով Աշտիկերտի արեւմտեան բարձունքը գտնուած Խալեազ[1] լեռնադաշտից կարող ես տեսնել. իսկ բաժանումներն էս նոյն ուղղութեամբ ձգուած են առանձին առանձին։

ԼԵՌՆԱՇՂԹԱՅՔ

Ջրաբաշխ լեռներու շղթայն զԲագրեւանդ հիւսիսից կորաձեւ պատած նաև Ղլիճկետուկ և Ալատաղ ի հարաւոյ նոյնպէս պատած լինելուն դաշտն ձուաձեւ կերպարանք առած է, ասացի, որ ձուի հաստ կողմն կարող ենք համարել դաշտի արեւմտեանն և սուրն՝ արեւելեանն, սակայն երկու գետերու միացմամբ կազմուած Արածանին արեւմտեան դաշտի հարաւային լեռնաշղ-

---

շղթային, որ դէպի աջ (յարեւելս)—Մասիս, իսկ դէպի ձախ (յարեւմուտս)—ի Սինակ և ի Ջրաբաշխ կերակրի։

[1] Խալեազ Սուկաւէտից յարեւմուտս բարձր գիրք ունի, քսանի մօտ քրդարնակ գիւղերով լեռնադաշտ մէ, ուստի յարեւելս աչքիդ առջեւ կը պարզուի ամբողջ Բագրեւանդ շրջապատող լեռներն ու լեռնաշղթաներն, որոց միջավայրն, ի խոնարհ, երկու դաշտագետիններն, իսկ երբ յարեւմուտս դառնաս, Բասեան՝ որ հարաւից պատած են Բիւրակնեան լերինք որմէ յարեւելս ձգուած Սպիտակ լերինք. հիւսիսից Խորասանայ ելն. և առջեւդ Բասեանի դաշտն, դաշտի մէջ Քեօփրի քեօյ (Վաղարշաւան) և Հասան ղալայ (Ղեւոնդուպոլիս) գիւղաքաղաքներն որոյ վերայից դիմացդ կը պարզուին Կարնոյ բարձրաբերձ լերինք։